

տօնով: 40ական թուականներին նշանակում է ներսիսեան դպրոցի նկարչութեան ուսուցիչ: Այդ ժամանակաշրջանում էլ նա ամբողջապէս նուիրում է իր սիրած վրձինին եւ կտաւին:

*

Ներսիսեանն ամբողջապէս նուիրում է պատմական նկարչութեան: Վրձինում է գլխաւորապէս պատմական նկարներ եւ սորտրէտներ: Առհասարակ պատմական ժանրում նա ամենաառաջին եւ միակ նկարիչն է: Նրա վրձինին են պատկանում Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Ներսէս Ե.ի նկարները:

Նկարչի տաղանդի մասին ժամանակի մամուլում արձանագրել են Ստ. Նազարեանը, Պոռչեանը եւ Ալ. Երիցեանը: Այդ հանդամանքն էլ հաստատում է նրա նկարչական-կուլտուրական արժէքը:

*

1884 թուին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում Ներսիսեանն ընդ միշտ փակեց իր աչքերը՝ յետին չքաւորութեան մէջ: Մի քանի բարերարների ծախքով կատարուեց նրա թաղումը...:

Սօջիվանքի գերեզմանատանը կայ մուսուլմանական անյայտ մի հողակոյտ, որի վրայ ոչ քար կայ, ոչ էլ որեւէ արձանագրութիւն: Դա նկարիչ Ներսիսեանի շիրմնն է:

90ական թուականներին Պերճ Պոռչեանը «Տարագ»ի միջոցով կոչ արեց հայ նկարիչներին, մատենագիրներին եւ գեղագէտներին տապանաքար դնել նկարչի դամբարանի վրայ, բայց, զժբախտաբար, նրա կոչը չգտաւ արձագանք:

ՆԿԱՐԻՉ ԶԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՄՇԻՆԵԱՆ
(1856 - 1914)

Յայտնի ժանրիստ եւ մանկավարժ: Մանկութիւնն անցնում է Դաղոտանի չքնաղ բնութեան ծոցում, ուր եւ սնւում է ապագայ նկարիչը:

Ուսանում է Թիֆլիսի գիմնազիայում եւ միաժամանակ նկարչութեան դասեր վերցնում «Կովկասեան արուեստը խրախուսող ընկերութեան» դպրոցում: 1876 թուին մտնում է Պետերբուրգի Գեղարուեստական ճեմարանը, ուր աւարտելուց յետոյ մեկնում Պարիս՝ կատարելագործուելու իր արուեստի մէջ:

80ական թուականներին վերադառնալով Թիֆլիս, Ներսիսեան, Գայիանեան դպրոցներ

ում եւ Յրդ Գիմնազիայում նկարչութեան դասեր է տալիս: Նոյն շրջանում առանձին հմտութեամբ ու ճաշակով վրձինում է տեղական դանդաղ ազդութիւնների կեանքի բնորոշ մոմէնտները: Դրանցից ուշագրաւ են. «Թիֆլիսի Շէյքսպիրացի», «Ղէյնօբա» եւ «Օբա»: Այդ նկարներում տեսնում էք Անդրկովկասի ժողովուրդների սովորութիւնները, տիպերը եւ հագուստները:

*

Թաղուած է Սօջիվանքում, ուր հողակոյտի վրայ ոչ քար կայ, ոչ էլ որեւէ կոթող:

ՆԿԱՐԻՉ ՄԻՔԱՅԷԼ ԽՈՒՆՈՒՆՑ
(1883 - 1931)

Լաւագոյն գծագէտ-գրաֆիկ նկարիչ: Գեղեցիկ եւ նուրբ վրձինով նկարազարդել է հայկական հէքեաթները:

Կիւելի ճարտարապետական թնտիստում մշակում է իր նկարչական բնածին յատկութիւնները: Վերադառնալով Թիֆլիս, դանդաղ դպրոցներում տալիս է նկարչութեան դասեր եւ միաժամանակ նուիրում իր վրձինին:

*

Սօջիվանքում, Սունուկեանց գերեզմանաշրջանում, անպաճոյճ մի հողակոյտ՝ առանց քարի եւ արձանագրութեան: Այդտեղ է թաղուած լաւագոյն գրաֆիկ նկարիչ Սունուկեանցը:

ՅԵՐԵՆՑ
(1832 - 1888)

1879 թուին Թիֆլիսում լոյս տեսաւ մի պատմական վէպ. «Երկունք Թ. դարու»: Պոլոյ բարբառով գրուած, ժամանակաշրջանի ազգասիրական ձգտումներն ու տրամադրութիւնները գրուելուց աչք վէպի հեղինակը թիւրքահայ մի բժիշկ էր, որ Ներսիսեան դպրոցում դասաւանդում էր Հայոց պատմութիւն: Դա Ծերենցն էր — Յովսէփ Շիշմանեանը:

«Թորոս Լեւոնի», «Երկունք» եւ «Թեոդորոս Ռշտունի» — ահա այն կոթողները, որ նա կերտեց: Այդ պատմավէպերով էլ նա յայտնի դարձաւ:

*

Թիֆլիսի Սօջիվանքում, Բաֆֆու Գերեզմանի սահմանագծում, իր միակ դասեր՝ Թագուհի Մելիք-Աղարեանի շիրմի կողքին, կայ անպաճոյճ մի գերեզմանաքար: Այդտեղ

է հանգչում Ծերենցը: Թխագոյն, կէս մետր բարձր, երկար կրանիտէ քարի վրայ դրօշմուած է սպիտակ մի մարմար, որի վերեւ ճակատին քանդակուած է մի խաչ, իսկ ներքեւում փորագրուած է.

ԴՕԿՏՕՐ
ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ
ԾԵՐԵՆՑ
ՎԱՅ. 17 ՓԵՏՐՎԱՐԻ 1888 ԱՄԻ
Ի ՀԱՍԱԿԻ 56 ԱՄԱՅ

ԱՇՈՒՂ-ՋԻԻԱՆԻ
(1846 - 1909)

Սայեաթ-Նովա, աշուղ-Շիրին եւ աշուղ-Ջիւանի — ահա աշուղական գրականութեան երեք սիւները, որոնք կերտեցին աշուղական նոր արուեստի ամենալաւագոյն էջերը եւ հանդիսացան աշուղական նոր շիջույթի դրօշակիրները: Ահա թէ ինչու այդ աշուղներն այսօր առանձնայատուկ եւ ուրոյն տեղ են գրաւում աշուղական գրականութեան պատմութեան մէջ:

Ինքնուս, բնածին տաղանդ էր Ջիւանին, որը, սակայն, իր աննման ձիրքով խոշոր դեր կատարեց աշուղական գրականութեան մէջ:

Ինչո՞ւմն է կայանում նրա դերը:

Շիրինից յետոյ նա առաջին աշուղն է, որ երգեց ժամանակակից գրական լեզուով: Նա գտեց, մաքրեց օտար բառերը դաւառաբարբառները եւ հիմք դրեց աշուղական նոր գրականութեան:

Սակայն Ջիւանին այդ յաղթականակով չի սահմանափակեց իր աշուղական գործունէութիւնը:

Նա էր, որ հիմնեց աշուղական ամենաառաջին դպրոցը, ուր աշուղական արուեստը ոչ միայն նոր փայլ ստացաւ, այլ եւ գրուեց գեղարուեստական բարձրութեան վրայ: Այդ դպրոցումն էլ բազմաթիւ անտաշ աշուղներ մշակեցին եւ զարգացրին իրենց ընդունակութիւնները եւ ստացան աշուղական լուրջ կրթութիւն:

Բայց գրանով էլ կանգ չառաւ Ջիւանին:

Նա հիւսեց աշուղական անպաճոյճ, բայց նոր եւ գողարիկ երգեր, որոնք շուտով դարձան հասարակ ժողովրդի, գիւղացիութեան, աշխատաւոր խաւերի սեփականութիւնը, անցան բերնից բերան, տարածուեցին ամենահեռաւոր, ամենախուլ անկիւնները եւ շուտով հռչակեցին աշուղի անունը:

Այսօր էլ դեռ հայաբնակ հեռաւոր գիւղերում հնչում են նրա երգերը: Հարաւային Պարսկաստանի Սպահանի Փէրիա եւ Չարմահալ գաւառներն ուսումնասիրելիս, քանիցս լսել եմ գիւղացիների շրթերի վրայ նրա հիւսած «Չախորդ օրերը», «Խելի աշեցէֆ», «Պաղ աղբիւրի մօտ», «Սեւ աչեր», «Բո փափափով վառում եմ» երգերը: Միթէ այդ հանգամանքը պերճախօս ապացոյց չէ՞ Ջիւանու լայն ժողովրդականութեան: Եւ իրօք, Սայեաթ-Նովայից յետոյ դեռ ո՞չ մի աշուղ այնպիսի մեծ ժողովրդականութիւն չի վայելում, ոչ մի աշուղի երգերն այնպէս չեն տարածուած հասարակ ժողովրդի լայն խաւերում, ոչ մի աշուղի արուեստն այնպիսի պարզութեան եւ խորութեան չի հասած, ինչպէս Ջիւանու:

Ահա թէ ինչու նրա գրական պարզ լեզուով ու ոճով հիւսած երգերը երկար, շատ երկար պիտի հնչեն ժողովրդի շրթերի վրայ:

*

Ծերենցի եւ Յովհաննէս Թումանեանի շիրմներէ մօտ հանգչում են Ջիւանու նշխարները:

Հողակոյտը ծածկում է մուգ-թխագոյն պարզ եւ անպաճոյճ մի քար, որի կէսը խրուել է հողի մէջ: Քարի ճակատին կարդում եմ միայն երկու տող.

ԱՇՈՒՂ-ՋԻԻԱՆԻ
1846 - 1909

Ուռնու փոքրիկ ճիւղեր խոնարհուել են շիրմի վրայ, ասես սգում են ժողովրդական մեծ աշուղի կորուստը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



ՀԱՅ-ԿԻՊՐՈՍ

Միջերկրական ծովու մէջ, Հայկական Կիլիկիայի գրեթէ դիմաց ցցուած է Կիպրոս կղզին: Դրից մերձաւորութեամբ եղած է նաեւ Կիպրոսի քաղաքական եւ առեւտրական աղբյուր հայ Կիլիկիայի հետ սերտ: Դարերէ ի վեր Կիպրոս հիւրընկալն եղած է բազմաթիւ հայերու. եւ այսօր իսկ կ'ապրի հոն մեծ թիւ մը հայութեան:

Պարագաները կը յորդորեն վեր հանել մանրախոյզ քննութեամբ ոչ միայն կղզւոյն

մէջ բնակութիւն հաստատած հայ գաղութին պատմութիւնը, այլ եւ Կիւրոսի եւ Հայկական Կիլիկիայի միջեւ մշակուած քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները: Արդեամբք ալ նուիրուած է Հայ-Կիւրոսի ուշադրութիւն եւ լոյս տեսած են մասնաշաղկապական աշխատութիւններ: Առաջին աշխատութիւնը կը պարտինք Բակուրանի (Վահան Մ. Քիւրթեանի), որ տուաւ Կիւրոս կղզի-Ա. Աշխարհագրական եւ պատմական տեսութիւն. Բ. Հայ գաղթականութիւնը. Նիկոսիա 1903, 8⁰, էջ 122: Ճիշդ 25 տարի յետոյ նոյն խնդրով զբաղեցաւ Ա. Ալպոյանեան, Կիւրոս կղզի-ի ր անցեալն ու ներկան, լոյս տեսած թէոզիկի Ամէնուն Տարեցոյցի մէջ ԻԱ. տարի 1927, էջ 192—254: Ասոր յաջորդեց նոր աշխատութիւն մ'ալ, Բակ (Բարդէն Ա. Կաթողիկոս Կիւլէսէրեան), Հայ-Կիւրոս. հայ գաղութը եւ Ս. Մակար. Անթիլիաս 1936, 8⁰, էջ ԺԶ + 272: Նոյն հեղինակի գրչէն էր նաեւ Ս. Մակարի վանք Հայոց ի Կիւրոս. Բիւզանդիոն 1897, Թ. 161 եւ 162:

Բակի աշխատասիրութիւնը, իրբեւ նորագոյն դործը նուիրուած Հայ-Կիւրոսի, կը յուսացնէր, թէ վերլուծելով յիշեալ երկու աշխատութիւնները եւ լուսաբանելով նոր նիւթերով, պիտի ընծայէր ամբողջական տեսութիւն մը Հայ-Կիւրոսի մասին: Ընթերցողը կը մնայ իւր անկախութեան մէջ յուսասիր: Հանգուցեալ Կաթողիկոսը տուած է հոն առաւելագոյն իւր տպաւորութիւնները Կիւրեան այցելութեանէն եւ մշակելի ատաղձներ, որոնք կրնան նպաստամտոյց ըլլալ Հայ-Կիւրոսի պատմութեան: Ինչպէս կը խոստովանի Բակ ինքնին. «Հայ-Կիւրոս ըման գործ մը չէ՝ իմ ըմբռնած կերպով»: Հեղինակը «գիւրութիւնը» չէ ունեցած ձեռքի տակ ունենալու Կիւրոսի հայոց կարգ մը Յիշատակարաններ եւ վաւերագրեր, որոնք գոյութիւն ունին անշուշտ ինչպէս տպագիր, նոյնպէս ձեռագիր աղբիւրներու մէջ:

Ալպոյանեան այս տեսակէտէ կատարած է սքանչելի ամփոփում մը, որ կրնայ նկատուիլ Հայ-Կիւրոսի պատմութեան համար առաջնորդ: Ինչ ինչ, հրապարակի վրայ արդէն ծանօթ նիւթեր վերագած են նաեւ իր ծանօթութեան. այսպէս Կիւրոսի Լուսինեան տան Ազգարանութիւնը, թարգմանուած ԺԳ. դարուն, զոր հրատարակած էր Ն. Ֆինկ, էջ-միածնի Թ. 1898 (= 1696, Կար. 1654) ձեռագրէն, ի թերթին Zeitschrift für arme-

nische Philologie, 1 (1901—1903), 177—185: Անշուշտ Լուսինեան տան տիրապետութեան (1192) յառաջ արդէն հասած էին ի Կիւրոս հայ գաղթականներ: Երբ տիրեցին Լուսինեանը Կիւրոսի, հոն բնակող Յոյներն ու Հայերը, որոնք մեծաւ մասամբ հողագործներ էին, դարձան անոնց հարկատու, ինչպէս կը վկայէ Վիլրամսը դ'Օլլէնպուրգ: Հայոց գրութիւնը շուտով բարելաւեցաւ, երբ Լեւոն Բ. Հայոց թագաւոր (1185—1219) խնամեցաւ Լուսինեանց հետ, կին առնելով Չապլը, Կիւրոսի երկրորդ թագաւորի Ամալրիխի դուստրը, որ ապա իբրեւ Թագուհի ալ կառավարեց պետութիւնը (1219—1251):

Այս շրջանին էր, իբր 1232ին, որ Ստեփանոս բժիշկ իւր շրջագայութեան կը հանդիպէր «ի Կիւրոս կղզուջ եւ ի Տարսուան եւ այլ բազում քաղաքս», ամենուրեք ի գործ դնելով իւր բժշկական արուեստը (Վիեննայի Միխի. Մատ. Թ. 624, թղ. 228ա):

1248ին, Սմբատ Գունդատարը կը տեղեկացնէր Կիւրոսի Հենրիկոս թագաւորին իւր ի Թաթարիստան կատարած ճանապարհորդութեան մասին, Երեւակ, Ը (1860), 361—364:

1287ին, Խաչատուր քահանայ «ի խնդրոյ սրբասէր եւ պատուական քահանայի Աբրահամայ» կ'օրինակէր Աւետարան մը «ի կղզիս որ կոչի Կիւրոսս, ընդ հովանեաւ սուրբ Վատվառայ եւ սուրբ զաւարվարին Սարգսի»: Կրպէ, Կարս քաղաքը, Մոսկուա 1894, էջ 99:

1280ին Պերէ երէց «եկաք, կը գրէ, ի Կիւրոս կղզին ի դուռն սրբուհոյ Աստուածածնին», եւ կ'օրինակէ հոն Աւետարան մը, «ի դառն ժամանակիս, զի ազգն Հայոց վաղեն ոմն այսպէս եւ ոմն այնպէս»: Ձեռագիրս կը ստանայ Հոռոմիսթուն, «վասն սուրբ Աստուածածնի». Նոր-Ջուղայ, Աւետարան Ս. Մինաս եկեղեցոյ:

1310—1312 տարիներուն Կիւրոս կը գտնուէր հայ հոյակապ գրչագիրներէն մին՝ Ստեփանոս Գոյներ երիցունց, ուր կ'օրինակէր 1310ին Գործք Առաքելոց «հրամանաւ աստուածասէր եւ բարեպաշտ պարոնին տիկին Ալիծին մաւրբաւր թագաւորացն Հայոց, ի միխթարութիւն կենաց իւրոց եւ ի յիշատակութիւն հոգւոյ իւրոց». եւ 1312ին Յովհաննու Աւետարանը «ի հրամայական խնդրոյ աստուածասէր եւ բարեպաշտուհի պարոնին տիկին Ալիծի սինէջալեան Կիւրոսի, որ էր դուստր պարոն Հեթմոյ որ տէր էր Լամ-

պրունի». «արդ վերոյգրեալ բարեպաշտուհի պարոն բազում ամս խնամարկեաց զիս բազում եւ մեծ գթով, գրեթէ որպէս որդեսէր ծնաւդ զանդրանիկ իւր, այնպէս գթաց ի նուաստս եւ յանարժանս»: «Գրեցաւ, կ'ըսէ, ի թուին ՉիԱ. ի դեկտեմբ. ԻԹ. ի Կիւրոս կղզի, ի Մաղուսայ (= Ֆամագուստա), ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս». Կերլա, Հայերէն ձեռագիրք, Թ. 31: Նոյն տեղ 1317ին Յովհաննէս գրիչ կ'օրինակէր խորհրդածութիւն սրբազան պատարագի «ի Կիւրոս կղզի, ի դուռն Աստուծոյ մօր տաճարին Աստուածածնի, որ է վանք եւ կոչի Կանչուոր, ի քաղաքիս Մաղուսայ» (Բակուրան, Կիւրոս կղզի, էջ 70):

1318ին, Թորոս գրիչ կ'օրինակէ Նոր Կտակարան. «գրեցի, կ'ըսէ ձեռամբ իմով ի Կիւրոս կղզի ի դուռն աստեանհասին սրբոյն Սարգսի, յոյժ տաժանամբ՝ ոչ ունելով պատշաճաւոր տեղի». կը խնդրէ յիշել «եւ զՍահակ քահանայ... որ է ի նոյն կղզիս պանդխտակից մեր. որ եւ կազմեաց զգիրքս զայս» (էջմ. 242):

1426ին յիշատակագիր մը կը գրէ. «ի յայս ժամանակի, ի թվականութեանս ՊՉԵ. ի վարդապետին կիրակի Մարայ սուլթանն զԿիւրոս էառ եւ զբազում քրիստոնեայս գերի էառ. որ էին ողիք ԵՌ. զկոտորեալս ո՞ թուեսցէ (տպ. թուով է). ո՞հ վայ է զիս» (Արձագանք 1887, էջ 537 = Արեւելք 1887, Թ. 1123):

Թովմաս Վանանդեցի 1668ին կը յիշէ թէ ճաշոցի մը մէջ պատահած է Կիւրոսի Դաւիթ եպիսկոպոսի մը յիշատակագրութեան յամէ 1504 (Բակ, Հայ-Կիւրոս 187—188). սա 1515ին ի Վենետիկ է (Ալիշան, Հայ-Վենետ. 205). իսկ 1519ին ի Հոռոմ. «Չգծող Պատարագամատոյցիս դ'Դաւիթ սոսկանունն եպիսկոպոս Կիւրոսի յիշեալիք ի Տէր եւ սխալանացս անմեղազիր լերուք, զի առանց օրինակի գրեցաւ ի Հոռոմ քաղաքի: Արդ գրեցաւ սա ի թվի մարմնաւորութեան Քրիստոսի ի ՌՇԺԹ. յամսեանն հոկտեմբերի ի ԺԳ.» (Մողենա, Biblioteca Estense, cod. gr. n. XIX):

1565ին Սոյ Խաչատուր կաթողիկոսի (1560—1584) հրամանաւ Կիւրոս կու գայ Ղուկաս վարդապետ (Բակուրան, անդ, էջ 109—110): Թուականը ձեռագրին մէջ անընթեանի է. պէտք է իմանալ 1565, Յուլիս 2ին (Ս. Գրիգորի Պահոց Բչ.):

1570ին գրաւուեցաւ Կիւրոս թուրքերէն:

այս անթիւ երգած է Նիկողայոս Ստամպոյլցի իւր ողբն Կիւրոսի առնման վրայ, զոր հրատարակած եմ Վիեննայի Թ. 1002 ձեռագրէն Անահիտ, Բ., 1931, Թ. 5—6, էջ 69—72, ասկէ արտատպուած՝ Բակ, Հայ-Կիւրոս, 262—264:

1578ին կը նորոգուի Աւետարան մը «ի Կպոս կղզին», «յիշատակ վարդապետ խընդիրչին» (Սարգիսեան, Յուլեակ Միխի. Մատենադարանի, Ա., էջ 560):

1668ին Կիւրոս այցելած է Թովմաս Վանանդեցի եւ մէկ ու կէս տարի մնացած է հոն (Բակ, Հայ-Կիւրոս, 187—188):

1671ին կ'օրինակուի Պարգատումար մը «ի ծովածոց կղզիս ի Կիւրոս, ի դուռն սրբոյն մեծին Մակարայ աստուածամերձ յանապատին եւ միախումբ եղբարցս, ի խնդրոյ բազմերախտ հօրն իմոյ Կիրակոսի վարդապետին, ձեռամբ անյիմաց գրչիս Սարգիս միայնաւորիս. թվին ՌՃԻ (էջմ. 2022):

1675ին Կիւրոս հանդիպած է «Յակոբ Թիվիլիցցի» եւ յիշատակագրութիւն մը գրած ի Նիկոսիա պահուած Հարանց վարքի մէջ:

Այս թուականին Ս. Մակարայ առաջնորդը կը գտնուէր Վան (Ալպոյանեան, անդ, 222). Վանէն անցած է Կ. Պոլիս, ուր Յայսմաուրք մը օրինակել կու տայ Յովհաննէս երէցին. կ'ըսուի. «ցանկացող եղեալ... աստուածասէր եւ տեսանահուպ բանի սպասաւոր Սարգիս վարդապետս յորդորեաց եւ թելադրեաց... գոյն վերընծայեաց ի դուռն սուրբ մենաստանին ի ծովածոց կղզին ի Կիւրոս, ի սուրբ յանապատն երիցն երանեալ եւ երջանիկ սուրբ հօրն մեծին Մակարայ...: վերոյգրեալ Սարգիս վարդապետս, որ առաջնորդ էի սուրբ մենաստանիս եւ թելադրող սուրբ տառիս որ կոչի... Յայսմաուրք... յիշեալիք» (ի ձեռագիրս Նիկոսիոյ):

Այս մանր տեղեկութիւնք, որոնք չեն շահագործուած Հայ-Կիւրոսով զբաղող նախորդ քննիչներէն, կը յուսանք թէ պիտի նպաստեն Հայ-Կիւրոսի մանրապատում նկարագրութեան, որ պէտք է գրուի օր մը, տեղայն վրայ կատարուած մանրագնին հետախուզութեամբ:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

